ՈԼՈՐՏ

# ՖԵՐՄԵՐՆԵՐ, ՍՏԱՑԵՔ ԳՐԱՆՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԵԿՏԱՐԻ ՀԱՇՎՈՎ 200-ԱԿԱՆ ԼԱՐԻ

Ինչպես արդեն հաղորդել ենք, գյուղատնտեսական սուբսիդավորման ծրագրի շրջանակներում, որպես Վրաստանի կառավարության հակաճգնաժամային ծրագրի բաղադրիչ, ֆերմերները, որոնք Ազգային գործակալության հանրային ռեեստրում ունեն 0,25-ից մինչեւ 10 հեկտար գրանցված հողատարածք, պետք է դիմեն «Liberty Bank»-ի ցանկացած մասնաճյուղ: Այնտեղ նրանց անվճար կբացեն ագրո-քարտեր, որոնց վրա կուտանան միավորներ` Վրաստանի կառավարության հակաճգնաժամային գյուղատնտեսական սուբսիդավորման ծրագրի շրջանակներում: Ագրո-քարտերին կփոխանցեն միավորներ, որոնք կարող են օգտագործել գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում տարբեր ծախսերի համար:

Ինչպես արդեն նշեցինք, մեկ հեկտար հողամասի դիմաց նախատեսված է 200 միավորի փոխանցում, որը համարժեք է 200 լարիին: Այսպիսով, եթե ֆերմերը գրանցած ունի 0,25 հա, ապա քարտի վրա կփոխանցվի 50 միավոր, համապատասխանաբար, 0,50 հա-ի դեպքում` 100 միավոր (լարի) եւ այդպես շարունակ:

Գրանցված 0,25 հա-ից մինչեւ 1,25 հա հողատարածք ունեցող ֆերմերները կարող են իրենց միավորները (գումարը) ծախսել միայն հետեւյալ գնումների համար.

- պարարտանյութերի եւ բույսերի պաշտպանության համար քիմիական եւ կենսաբանական միջոցների ձեռքբերման,
- բույսերի քիմիական եւ կենսաբանական խնամքի միջոցների ձեռքբերման,
- սերմերի կամ տնկանյութերի ձեռքբերման համար:

Իսկ ֆերմերները, որոնք ունեն 1,25-10 հա գրանցված հողեր, կարող են իրենց միավորները ծախսել ինչպես վերը նշված միջոցների եւ նյութերի ձեռքբերման, այնպես էլ` գյուղատնտեսական ծառայությունների (հերկման) վրա:

Սուբսիդավորվող գյուղատնտեսական այս ծառայությունից օգտվելու համար, հարկավոր է դիմել «Գյուղատնտեսական ծառայություններ եւ լոգիստիկա» ընկերությանը (նախկին` «Մեխանիզատորը»), որն ունի սպասարկման կենտրոններ, որոնք տեղակայված են Վրաստանի 12 շրջաններում: Սամցխե-Ջավախեթիում սպասարկման կենտրոնը գտնվում է Ախալցիխեում:

Միավորները հնարավոր է ծախսել մինչեւ 2020 թվականի ավարտը:

Ծրագրի շրջանակներում, ֆերմերների համար առավել սուբսիդավորումը կազմում է 2000 լարի\միավոր, եւ մինչեւ 200 000 ֆերմեր կօգտվի այս ծրագրից: Ծրագրի բյուջեն 37 միլիոն լարի է, ծրագրի իրականացումը սկսվել է ընթացիկ տարվա մայիսի 20-ից:

# ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ԳՐԱՆՑԵԼ 1,2 ՄԻԼԻՈՆ ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ

***Վրաստանի կառավարությունն առաջիկա երեք տարիների ընթացքում նախատեսում է` գրանցել 1,2 միլիոն հա հողատարածք:***

Ինչպես նշեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, ամռանը մեկնարկվելիք հողատարածքների գրանցման 8-ամսյա նախագիծը նախ` կիրականացվի լեռնային շրջաններում, իսկ հաջորդ տարվա սկզբից կընդլայնվի` ներառելով Վրաստանի բոլոր մարզերը: Առաջիկա երեք տարիների ընթացքում հողատարածքների գրանցման նախագիծը կիրականացվի ողջ Վրաստանում: Ինչը նշանակում է, որ երկրի աշխարհագրական տարածքը պետք է ամբողջությամբ ընդգրկվի կադաստրի կողմից:

Նշենք, որ նորանկախ Վրաստանի պատմության բոլոր տարիների համեմատությամբ, 2016 թվականից մինչեւ օրս հողատարածքների գրանցման ցուցանիշը եռապատկվել է:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# TBC. ՆՈՐ ՀԱՐԹԱԿ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ




***TBC բանկը գործարարների աջակցության եւ նրանց գործունեության դյուրացման համար ստեղծել է նոր օնլայն tbcpayments.ge հարթակ: Վճարումների տարբեր մեթոդների կապակցությամբ` կայք-էջը գործարարներին ընձեռում է ո-ջ տեղեկատվությունը մեկ հարթակում ստանալու եւ հեռավորության վրա վճարման իրենց ցանկալի մեթոդի ներդրման հնարավորություն:***

Հարթակը հատուկ ստեղծվել է բիզնես-ներկայացուցիչների համար, եւ այն առնչվում է միկրո, փոքր եւ միջին, ինչպես նաեւ կորպորատիվ բիզնեսմեններին:

Կայք-էջի միջոցով բիզնես-ներկայացուցիչները հնարավորություն ունեն ընտրել իրենց համար վճարման ցանկալի մեթոդը (ինչպես կոմերցիոն, այնպես էլ` պոս. տերմինալի ուղղություններով), մանրամասն տեղեկատվություն ստանալ վերոնշյալ սպասարկման վերաբերյալ եւ հեռավորության վրա պահանջել ու ներդնել իրենց բիզնեսի համար վճարման ցանկալի մեթոդը:

- TBC բանկի, որպես վճարումների բիզնեսի առաջատար ընկերության նպատակն է` ներկայացնել սպառողների անհատական կարիքներին առավել հարմարեցված, նոր սպասարկումներ ու ծառայություններ: Ուրախ ենք, որ նոր հարթակը բազում գործարարների համար կդյուրացնի գործունեությունն ու կօգնի հասնել է'լ ավելի մեծ հաջողությունների,- հայտարարեց TBC բանկի վճարումների լիգայի ղեկավար Թամունա Ժիժիլաշվիլին:

Բիզնես-սուբյեկտների համար նոր հարթակը արդեն գործում է, եւ այն մատչելի է հետեւյալ հասցեով` www.tbcpayments.ge:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԵՏ

# ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ, ՈՎՔԵՐ ՇԱՏ ԵՆ ԽՈՍՈՒՄ, ԲԱՅՑ ՔԻՉ ԳՈՐԾ ԵՆ ԱՆՈՒՄ, ԵՍ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ` ՇԱՏ ԵՄ ԱՇԽԱՏՈՒՄ, ԲԱՅՑ ՔԻՉ ԵՄ ԽՈՍՈՒՄ»

***Մայիսի 18-ին, «Մեդիացենտր Մքավարիի» եթերում հեռարձակվեց հեռուստաընկերության հարցազրույցը Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի հետ: Այն հրապարակվեց նաեւ հեռուստաընկերության կայքում: Հարցազրույցում պատգամավորը խոսեց Ախալքալաքիում, ընթացիկ տարվա մարտի 26-ին, խորհրդարանի նախկին պատգամավոր Սամվել Պետրոսյանի հետ, կրակոցներով ուղեկցված միջադեպի, ինչպես նաեւ` պատգամավորական իր գործունեության մասին:***

***Ստորեւ կրճատումներով ներկայացնում ենք «Մեդիացենտր Մքավարիի» կողմից մեզ հասցեագրված հարցազրույցի սղագրությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նյութը թերթի համար բավական ծավալուն է, ներկայացնում ենք դրա հակիրճ տարբերակը, իսկ հարցազրույցը (վրացերեն եւ հայերեն) լրիվությամբ տեղադրված է հեռուստաընկերության կայքում եւ Հենզել Մկոյանի «Ֆեյսբուքի» էջում:***

Պատգամավոր, որը գրեթե 20 տարի է, ինչ խորհրդարանի անդամ է, թեպետ ո'չ լրատվամիջոցների հետ հարաբերություններում եւ ո'չ էլ խորհրդարանական ամբիոնի մոտ ակտիվությամբ աչքի չի ընկնում: Ինչո՞ւ չի հավատում լրատվամիջոցներին, ի՞նչ տեղի ունեցավ Ախալքալաքիում, ով` ում վրա կրակեց, ի՞նչն էր զինված դիմակայության նախապայմանը, այս եւ աղմկահարույց մյուս թեմաների շուրջն է «Մեդիացենտր Մքավարիի» հարցազրույցը Հենզել Մկոյանի հետ, որի ձայնագրումը այնքան էլ դյուրին չէր:

***- Պարոն Հենզել, շատ դժվարությամբ կարողացա Ձեզանից հարցազրույց վերցնել: 1998 թվականից խորհրդարանական լրագրող եմ, բայց ոչ մի անգամ չի հաջողվել Ձեզանից հարցազրույց վերցնել: Մինչ կանցնենք կոնկրետ թեմաներին, խնդրում ենք` բացատրեք Ձեզ լրատվամիջոցներից հեռու պահելու պատճառները:***

- Շատ լավ է, որ այս հարցով սկսեցինք մեր զրույցը: Կբացատրեմ լրատվամիջոցների հետ չհամագործակցելու պատճառները: Նախ, արդեն երկար տարիներ է, ինչ մեր երկրամասում գործեր եմ կատարում, բայց ճիշտ չեմ գտնում դրանց ցուցադրումն ու «գովազդումը»: Այդ գործերի ամենաճիշտ գնահատողը հենց այն բնակչությունն է, ում այն անմիջականորեն առնչվում է, եւ ում վրա անմիջականորեն արտահայտվում են այն օգուտները, որոնց մասին հետո կպատմեմ:

Երկրորդ պատճառը այն է, երբ լրագրողը գալիս է, հարցեր առաջադրում, բոլոր հարցերին անխտիր պատասխանում ես, սակայն հետո, երբ դիտում ես տեղեկատվական հաղորդումը, տեսնում ես, որ այն ամենը, ինչի մասին խոսել ես, սխալ է հասկացվել եւ այնպես է «կրճատվել», որ ասածիդ հակառակն է ներկայացվել: Հիմա Ձեզ եմ դիմում. սրանից հետո պետք է վստահեմ լրատվամիջոցներին (իհարկե, այն ոչ բոլորին է վերաբերում): Նման դեպքեր շատ են եղել, երբ մեկնաբանումներս չեն ցուցադրել, հարցազրույցներս այնպես են կրճատել, որ ինքս էլ արդեն չեմ հասկացել ասածս: Երբ լրատվամիջոցները տրամադրված են միայն վատի ցուցադրմամբ եւ սեւացմամբ, թարախակալմամբ, պետք է վստահություն ներշնչե՞ն: Երբ կուսակցական հեռուստատեսություններից մեկի լրագրողը` մարդասպան, քրեական, ավազակ, հրձիգ է անվանում, երբ լրագրողը անմիջականորեն դատավճիռ է կայացնում, մեղադրում է, որ դու քրեական ես, եւ ավազակ, որքա՞ն կվ եմ նմանին վստահելու:

Իհարկե, լրատվամիջոցները պարտավոր են բոլոր կողմերն էլ լուսաբանել, այդ թվում` նաեւ բացասականը, սակայն միտումնավոր, նպատակաուղղված հարձակումն ու անձի վատաբանումը վստահության արժանի չեն:

Գիտե՞ք, թե տեղացիները իմ մասին ինչու են լավ խոսում, որովհետեւ անընդմեջ, 24 ժամ շարունակ աշխատում եմ: Նրանց հետ ակտիվորեն շփվում եմ, գիտեմ հեռախոսահամարներով հանդերձ, եւ գրեթե բոլորին անձամբ եմ ճանաչում, տեղյակ եմ նրանց հիմնախնդիրներին եւ օգնում եմ: Եթե նույնիսկ մեկ անգամ խաբես մարդկանց, ուրեմն` վերջ: Այլեւս ոչ ոք չի վստահի քեզ: Ես իմ բյուրոյում ընդունելություններ եմ անցկացնում առավոտյան 10:00-ից մինչ երեկոյան 10:00-ը: Լսում` նրանց հոգսերն ու խնդիրները, հետո միայն` գնում տուն:

***- Քանի որ սկսեցինք զրուցել այս թեմայի շուրջ, ի՞նչ պահանջներ ունի ժողովուրդը:***

- Տարբեր պահանջներ ունեն: Օրինակ, շատերը վիրահատման կարիք ունեն, որոշ մարդիկ աշխատանքի խնդիր ունեն, ոմանք` իրենց երեխաների դպրոցական պարագաների գնման խնդրանքով են դիմում, ուսանողներն էլ` օգնության կարիք ունեն` ֆինանսական տեսանկյունից ելնելով, բնականաբար, անհրաժեշտ է աջակցության ցուցաբերում, քանի որ կրթությունը շատ կարեւոր է: Դրա համար էլ Նինոծմինդայում եւ Ախալքալաքիում բարձր վարկանիշ ունեմ, անգործ չեմ թափառում:

**(Ապա` «Մեդիացենտր Մքավարիին» հետաքրքրեց Ախալքալաքիում մարտի 26-ին տեղի ունեցած միջադեպի մասին: Այդ թեմայի շուրջ «Վրաստան» թերթը մանրամասն տեղեկացրել է պարբերականի ընթացիկ տարվա ապրիլյան 27-28 եւ 29-30 համարներում):**

***«Մեդիացենտր Մքավարիին» հետաքրքրեց նաեւ Հենզել Մկոյանի ընտանիքի եւ գործարար շրջանների հետ կապի հարցը: Մասնավորապես, եղբայրների մասին, ի պատասխան Հենզել Մկոյանն ասաց.***

- Մենք երեք եղբայր ենք: Մի եղբայրս շատ ջահել` 50 տարեկան հասակում մահացավ: Իսկ ինչ վերաբերում է մեր գործունեությանը` մենք այստեղ առաջին հիդրոէլեկտրոկայանն ենք կառուցել` զրոյից: Նույնիսկ Էդուարդ Շեւարդնաձեն էր այցելել, որպեսզի բոլորին ցուցադրի, թե ինչպես է բարձրացվում տարածաշրջանում էկոնոմիկան: Այս կայանից 12 տարի անընդմեջ էլեկտրոէներգիայի 35 տոկոսն անվճար տրամադրել ենք դպրոցներին, հիվանդանոցին եւ ոստիկանությանը, նման այլ հիմնարկների: Սա այն ժամանակ էր, երբ քաղաքականությամբ չէի զբաղվում: 1997-1998 թվականներին, երբ դպրոցներում ցուրտ էր եւ երեխաները դասերին վերարկուներով էին նստում, որ չսառչեն, եղբայրներով որոշեցինք օգնել նրանց, որպեսզի կրթություն ստանան համապատասխան պայմաններում: Երկու տարի շրջանի բոլոր դպրոցներին, առանց բացառության, ապահովել ենքածուխով ու փայտով:

Այսպես եղավ նաեւ հիվանդանոցի դեպքում: Լույս չունենալու պատճառով` չէին կարողանում վիրահատություններ կատարել: Հիվանդներն ու բժիշկները պալատներում սառչում էին: Մեր տրամադրած աջակցու-

(Շարունակությունը` 6-րդ էջում)

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅՏՆՎԵ՞Լ ԵՔ, ԱՐԴՅՈՔ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ

***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ծրագրային նոր (https://www.rs.ge/kompensacia) ապահովումը քաղաքացուն հնարավորություն է ընձեռում անձամբ ստուգել փոխհատուցում ստացողների ռեեստրը:***




Եկամուտների ծառայության տարածած հաղորդագրության համաձայն, յուրաքանչյուր անձ դյուրությամբ կարող է մտնել համակարգ, անձնական համարով եւ կազմակերպության նույնականացման ծածկագրով ու ստուգել, արդյոք, գործատուն արդեն ներկայացրե՞լ է տվյալները:

Ստուգման գործընթացն ավարտելուց հետո` անձը կստանա կարճ տեքստային հաղորդագրություն դիմումի մեջ գործատուի կողմից նշված բջջային հեռախոսահամարի վրա` արդյոք կա՞, թե՞ ոչ փոխհատուցման ստացողների ռեեստրում: Գերատեսչության տեղեկատվությամբ` նշված համակարգով անձը կարող է գործատուի հետ կապ հաստատել այն պարագայում, եթե պարզի, որ իր տվյալները դեռ չի ներկայացվել եկամուտների ծառայություն` փոխհատուցում ստանալու նպատակով:

«Հիշեցնենք, որ գործատու ընկերությունները, յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ, վեց ամսվա ընթացքում, պետք է ներկայացնեն այն աշխատակիցների ցուցակը, ովքեր առնվազն մեկ ամսվա ընթացքում աշխատել են 2020 թվականի առաջին երեք ամիսների (հունվար, փետրվար, մարտ) ընթացքում, ստանում էին աշխատավարձ եւ արտակարգ դրության ժամանակ դադարեցվել են կամ դադարեցրել են աշխատանքային հարաբերությունները: Հայտը չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում գործատուին տրվում է լրացուցիչ հինգ օր` նոր հայտ ներկայացնելու համար: Հետեւաբար, այս ժամանակահատվածը կշարունակվի մինչեւ ամսու 20-ը:

Գործատու ընկերությունների կողմից փոխհատուցումը հանձնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային հայտին եւ լրացման կարգին կարող եք ծանոթանալ հետեւյալ հղումով` https://eservices.rs.ge/ServiceRequestNew.aspx?p=751; https://www.rs.ge/common/get_doc.aspx?id=10898:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու համար` խնդրում ենք զանգահարել եկամուտների ծառայության տեղեկատվական կենտրոն` 2 299 299 կամ` գրել info@rs.ge էլ. հասցեին:

Տեղեկացնում ենք նաեւ, որ փոխհատուցում ստացող ինքնազբաղված անձինք պետք է այցելեն Առողջապահության նախարարության վեբ-կայք, որտեղ գրանցման հարթակում (http://compensation.moh.gov.ge/), մինչեւ հուլիսի 1-ը, պետք է անցնեն գրանցում: Առողջապահության նախարարության թեժ գծի համարը` 1505:

Հարթակում գրանցվել կարող են միայն ինքնազբաղվածները: Վարձու ինքնազբաղվածները իրավունք չունեն գրանցվելու»,- նշված է եկամուտների ծառայության տեղեկատվության մեջ:

# 5715 ՀԱՐԿԱՏՈՒԻ ԵԿԱՄՏԱՀԱՐԿՆ ՈՒ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ




***Գործարար սուբյեկտների աջակցության ծրագրի շրջանակներում, Վրաստանի կառավարության կողմից ընդունված որոշման համապատասխան, հակաճգնաժամային ծրագերի առաջին փուլում, հարկատուների այն կատեգորիան, ովքեր աշխատում են զբոսաշրջության ոլորտում, նաեւ` այն բիզնես-սուբյեկտները, ում գործունեությունը, ելնելով ստեղծված իրավիճակից, կանգնեցվել է, տրվել է եկամտահարկի եւ գույքահարկի վճարման հատվածում հայտագրված հարկային պարտավորությունները չորս ամսվա ժամկետով, մինչեւ ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը հետաձգելու հնարավորություն:***

Սահմանված արտոնությունից օգտվելու համար հարկատուն, դիմումի հատուկ ձեւաչափով, դիմելու է եկամուտների ծառայություն, որպեսզի նրանց նկատմամբ չկիրարկվեն պարտավորությունների վճարումը ապահովող միջոցառումներ:

Ներկա դրությամբ` մուտք է գործել ընդամենը 6444 հարկատուի դիմում, որից 5715-ը բավարարվել է: Ներկա փուլում ակտիվորեն շարունակվում է դիմումների քննարկման գործընթացը:

Հետաձգված վճարումների գումարը կազմել է 145 761 807 լարի:

Հատկանշական է, որ հակաճգնաժամային ծրագրի երկրորդ փուլում, զբոսաշրջության աջակցության համար, արդեն նախատեսվել են հարկային հետեւյալ արտոնությունները` 2020 թվականի գույքահարկից լրիվությամբ ազատվում են տեղադրման ու սննդի օբյեկտները, նաեւ` զբոսաշրջության ընկերությունները:

Միաժամանակ, նրանց համար երկարաձգվում է եկամտահարկի հատվածում արտոնյալ ժամկետը եւ, նոյեմբերի 1-ի փոխարեն, եկամտահարկի վճարման պարտավորության կատարում նրանց համար սահմանվում է մինչեւ ընթացիկ տարվա վերջը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԵՏ

# ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ, ՈՎՔԵՐ ՇԱՏ ԵՆ ԽՈՍՈՒՄ, ԲԱՅՑ ՔԻՉ ԳՈՐԾ ԵՆ ԱՆՈՒՄ, ԵՍ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ` ՇԱՏ ԵՄ ԱՇԽԱՏՈՒՄ, ԲԱՅՑ ՔԻՉ ԵՄ ԽՈՍՈՒՄ»

(Սկիզբը` 5-րդ էջում)

թյամբ փրկվել են հարյուրավոր մարդկային կյանքեր: Այն, ինչ պատմում եմ, կարող եք ստուգել: Վստահ եմ` ո'չ դուք, ո'չ էլ այլ լրագրողներ այդ մասին չգիտեն: Դրականը չի ցուցադրվում, այլ ցուցադրվում է, թե ինչպես հարեւանները վիճում են ու հանկարծ Մկոյանի ազգը հայտնվում է այդտեղ:

Շատ ցավալի է, երբ մարդ այդքան բարություն է անում, իսկ որոշ բարի չկամեցողները ցեխ են շպրտում նրա վրա: Չգիտեք նաեւ այն, որ Ախալքալաքիում «Ապրիլի 9-ի» հուշահամալիր ենք տեղադրել: Գեղեցիկ հուշարձան «Ապրիլի 9-ի» կապակցությամբ, որը մեր գաղափարն է եղել: Հուշարձանը տեղադրել ենք ասելու համար այն, որ ինչը ցավալի է վրաց ազգի համար, այն մեզ համար էլ ցավալի է: Հարգանքի տուրք ենք մատուցում ազատության պայքարում զոհվածների հիշատակին: Ես իմ ընկերոջ` Արմեն Ղարսլյանի հետ միասին, «Հայոս եւ Քարթլոս» 8 մետրանոց հուշարձանն ենք տեղադրել Նինոծմինդայում: Այստեղ` երկու եղբայրներ մեջքին մի խաչ են կրում: Հիանալի արձան է եւ նրա ապացույցը, որ մենք սիրում ենք Վրաստանը եւ նրա քաղաքացիներն ենք: Մենք մի խաչ ենք կրում, որի ապացույցն է այդ արձանը: Ես գտնում եմ, որ սա է իմ պետությունը: Իսկ այն մարդիկ, ովքեր փորձում են Ախալքալաքիում ստեղծել լարվածություն, նպատակադրված են ապակայունացում ստեղծելուն: Հիմա դրությունը այստեղ կայուն եւ խաղաղ է, իսկ նրանք ուզում են շրջանում խառնաշփոթություն առաջացնել:

Իմ եղբոր մոտ 300 տեղացիներ են աշխատում: Սա նշանակում է, որ այսօր 300 ընտանիք եկամուտ ունի: 300 ընտանիքը այս շրջանի համար քիչ չէ:

Մկոյան եւ Սանոսյան ընտանիքների շնորհիվ Նինոծմինդան եւ Ախալքալաքին գազիֆիկացվեցին: Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետներում գազիֆիկացված բաժանորդների ընդհանուր քանակը 17401 է, այդ թվում` 3601 բաժանորդ` Ախալքալաքիում եւ 1651 բաժանորդ` Նինոծմինդայում: Ախալքալաքիի մունիցիպալիտետում գազիֆիկացվել է 42 գյուղ - 7871 բաժանորդ, իսկ Նինոծմինդայի մունիցիպալիտետում` 22 գյուղ - 4278 բաժանորդ: Ես խոսում եմ կոնկրետ փաստերով եւ գործերով: Պատկերացրեք` քանի ընտանիք է գոհ գազիֆիկացմամբ: Չնայած այս ամենին` փորձում են կրկին իրադարձությունների զարգացումը խաթարեն եւ հազար ու մի սադրանքների են գնում:

***- Իրոք, չգիտեինք այս ամենի մասին: Կհամաձայնվեմ նրա հետ, որ դրականի ցուցադրումն էլ անհրաժեշտ է, սակայն լրատվամիջոցներս նրա համար ենք, որպեսզի հայտնաբերենք խնդիրները, գրուցենք դրանց մասին, նպաստենք զարգացումն ուղղելու ընթացքին: Ուզում եմ հարցնել այն հողերի վերաբերյալ, որտեղ եւս Մկոյան ազգը հնչեց: Չէ՞ որ պետությունը Ձեզ մեծ չափով հող է նվիրել:***

- Ես չեմ ասում, որ լրագրողները հարցեր չպետք է տան: Ինչքան էլ ցավալի լինի, կարող եք հարցադրել: Կարեւորը` հնարավորություն տրվի դրանց պատասխանելու: Տարածվել է կեղծ տեղեկություն: Բայց չէ՞որ, շատ հեշտությամբ կարելի է ստուգել այն: Հողի գրանցման հետ կապված փաստաթղթերին ցանկացած անձ էլ կարող է ծանոթանալ` Հանրային ռեեստրի ազգային գործակալության կայքում: Այնտեղ կտեսնեն, որ հողատարածքը Մարտուն Մկոյանին անվճար չի նվիրված: Գնման պայմանագրի հիման վրա` Մարտուն Մկոյանի եւ նրա արտասահմանյան գործընկերների հիմնած իրավաբանական անձը, բարեխղճորեն, շուկայական բարձր գնեով, այն գնել է նրա օրինավոր սեփականատիրոջից:

Գնման նպատակը արտասահմանյան գույքագրման ներդրումը եւ խոշոր նախագծի իրականացումն է` հարյուրավոր մարդկանց ապահովելով աշխատանքով: Այս նախագծի վրա հիմա էլ ընթանում են ակտիվ աշխատանքներ: Նշված տեղեկությունը տարածողները ո'չ փաստաթղթերով են հետաքրքրվել, ո'չ էլ ներդրումային նախագծով: Բացահայտ է, որ այն քարոզչական հեռուստատեսություն է, որի հետ կապված կեղծ տեղեկատվական գործակալությունների նպատակը` ինձ վարկաբեկելն է:

Երբ հեռուստատեսության ներկայացուցիչները գալիս են նկարահանման, հյուրընկալվում են քո ընդդիմադրի տանը, գիշերում, ով քո մասին հազար ու մի կեղտոտ բաներ է խոսում, սա՞ է անկախ լրատվամիջոցը կամ լրատվամիջոցի չափանիշը: Ինձ ի՞նչ է մնում` հերթով նման գալ եթերներով եւ արդարանա՞լ:

***- Պարոն Հենզել, ինչ ես լրատվամիջոցներում եմ աշխատում, դուք միշտ պատգամավոր եք, որը ձեր ընդդիմադիրներն էլ բազմիցս նշել են: Ինչպե՞ս եք կարողանում միշտ պատգամավոր ընտրվել: Երեւի Դուք էլ բազմիցս լսել եք այն գնահատականները, որ իբր «ընտրողին գնում եք»:***

- Առաջին անգամ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր եմ ընտրվել 1999 թվականին: Երբ քաղաքականություն ես մտնում, պարտականություններ են առաջանում: Եվ երբ որեւէ բան արդյունավետ ես կատարում, արդեն հասարակությունը ինքն է խնդրում, որ լինես իր ներկայացուցիչը խորհրդարանում: Ես իմ ժողովրդի ներկայացուցիչն ու կապող օղակն եմ պետության հետ: Օրինակ, մի տարի ստացել եմ քվեների 78%-ը, այն անհիմն չէ:

2008 թվականին է'լ ավելի շատ կողմնակիցներ ունեի, քանի որ վստահում էին: Ես նվիրված աշխատում եմ ու իմ միակ թերությունն այն է, որ ինքնագովազդում չեմ սիրում: Գիտեմ իմ ժողովրդի հուզող խնդիրները, պահպանում եմ կապը նրանց եւ իշխանությունների միջեւ: Կան պատգամավորներ, ովքեր շատ են խոսում, բայց քիչ գործ անում, իսկ ես ընդհակառակը` շատ եմ աշխատում, բայց` քիչ եմ խոսում:

***- Այդքան տարի է պատգամավոր եք, սակայն ձեզ խորհրդարանում ամբիոնի մոտ չեմ հիշում: Ի՞նչ կրթություն ունեք:***

- Երեւանում սովորել եմ համալսարանին կից ֆիզմաթ դպրոցը: Սա այն է, ինչ Թբիլիսիում` «Կամարովի դպրոցը»: Ավարտել եմ Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի էկոնոմիկայի ֆակուլտետը: Տեխնիկական կրթությունս հեռու է խոսելուց: Ես գեղեցիկ խոսել չեմ կարող, ես գեղեցիկ գործեր եմ կատարում:

***- Դուք երբեք վրացերեն չեք զրուցում, չնայած, որ գիտեք եւ հասկանում եք:***

- Ճիշտ է, ընդունում եմ, որ դա, երեւի, իմ թերությունն է: Պետական լեզուն հասկանում եմ, բայց վատ եմ խոսում: Ընդունում եմ, որոշ չափով էլ ամաչում եմ: Երեւի տեխնիկական կրթության պատճառով լեզուների հետ չեմ կարողանում ընկերակցվել:

***- Արդյոք, պատրաստվո՞ւմ եք պատգամավորության:***

- Դեռ որ չեմ կարող ասել, դա կախված է հասարակության վստահությունից:

## ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՎԵԼԻ ԼՈՒՐՋ Է, ՔԱՆ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մենք պետք է կոշտ քայլեր ձեռնարկենք, համավարակը հսկողության տակ վերցնելու նպատակով, որպեսզի ծայրահեղ միջոցներ չձեռնարկվեն: Մենք պետք է կարողանանք պաշտպանել կարանտինային ռեժիմը, առանց նրա հայտարարման,- ասել է Փաշինյանը:

Նա հավելել է նաեւ, որ Հայաստանում կորոնավիրուսի կապակցությամբ տարածվում են բազմաթիվ կեղծ տեղեկություններ, ինչը մեծացնում է համավարակի ռիսկերը:

- Կորոնավիրուսի հետ կապված ես պահանջել եմ տեղեկություն, թե ինչ տրամադրություն ունի բնակչությունը եւ իմացա հրաշքներ: Օրինակ, ոմանք կարծում են, որ նախարարական կաբինետի անդամները գումար են բաժանում քաղաքացիներին, որպեսզի նրանք դառնան կորոնավիրուսով հիվանդներ: Դա բացատրվում է նրանով, որ այս եղանակով հեշտ է միջազգային օգնություն ստանալը: Բացի այդ, քաղաքացիների մի մասը կարծում է, որ այլ պատճառներով մահացած հիվանդները հայտարարվում են կորոնավիրուսով մահացածներ: Մեկ անգամ եւս ցանկանում եմ ասել, որ այդ ամենը սուտ է,- նշել է Փաշինյանը:

Ստեղծված իրավիճակին Նիկոլ Փաշինյանն անդրադարձավ նաեւ «Ֆեյսբուքի» սոցիալական ցանցի ուղիղ միացման ժամանակ:

Ըստ Հայաստանի վարչապետի՝ քանի որ բնակչությունը «COVID-19»-ը չի ընկալում որպես սպառնալիք, երկիրը կանգնած է լուրջ խնդրի առաջ:

- Եթե մահվան տեմպը չկոտրենք, ապա մայիսի 29-ին կունենաք 10 հազար հիվանդացության դեպք, հունիսի 12-ին՝ 20 հազար հիվանդացության դեպք, ինչը նշանակում է, որ մահվան դեպքերը կավելանան, քանի որ վերակենդանացման բաժանմունքներում տեղ չի լինի: Եթե այս դինամիկան չփոխենք, ապա իսկապես շատ լուրջ հիմնախնդրի առաջ ենք կանգնելու, օրական տասնյակ, նույնիսկ հարյուրավոր մահեր կարող են գրանցվել: Այս իրավիճակին չհասնելու համար շատ կարեւոր է յուրաքանչյուրիս անհատական պատասխանատվությունը, պահվածքը,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց Կոչ եմ անում, խնդրում եմ, պահանջում եմ, որ պահպանվեն նորմերը: Թաղումները կատարվում են այնպես, կարծես ոչինչ չի պատահել: Մենք դեպքեր ունենք, որ թաղումները դառնում են մեծ բռնկումների պատճառ:

# ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԵՐԴՄԱՄԲ ՍՏԱՆՁՆԵՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ



*Մայիսի 21-ին, Արայիկ Հարությունյանը՝ երդման հանդիսավոր արարողությամբ ստանձնեց Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնը: Միջոցառումը տեղի ունեցավ Շուշիի Մշակույթի եւ երիտասարդության կենտրոնի դահլիճում անցկացվող ԱԺ հատուկ նիստում՝ սահմանադրությամբ սահմանված կարգով:*

Նախագահի երդման համար դահլիճ բերվեցին Արցախի Հանրապետության պետական դրոշը, Սահմանադրությունը եւ 17-րդ դարի Ավետարանը:

Պաշտոնի ստանձնման եւ երդման արարողությանը ներկա էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը, Արցախի երրորդ նախագահ Բակո Սահակյանը, երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը: Ազգային ժողովի հատուկ նիստին մասնակցում էին Արցախի հանրապետության ազգային ժողովի պատգամավորներ, Արցախի անվտանգության խորհրդի եւ կառավարության անդամներ, Գերագույն դատարանի նախագահն ու Վերաքննիչ եւ Առաջին ատյանի դատարանի նախագահները, Պաշտպանության բանակի բարձրագույն սպայակազմը, ԿԸՀ-ի անդամները, Հայաստանի եւ Արցախի կուսակցության ներկայացուցիչներ եւ այլք:

Հիշեցնենք, որ ապրիլի 15-ին, Արցախի Հանրապետության նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, նախագահ էր ընտրվել «Ազատ հայրենիք» կուսակցության նախագահ Արայիկ Հարությունյանը: Երկրորդ փուլում նրա հետ մրցակցում էր արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանը: Իսկ առաջին փուլի քվեարկությունը կայացել էր մարտի 31-ին: Հարությունյանը երկրի ղեկավարի պաշտոնում փոխարինեց Բակո Սահակյանին:

Մայիսի 21-ին անցկացվեց Արցախի Հանրապետության 7-րդ գումարման ազգային ժողովի անդրանիկ նիստը: Պատգամավորները՝ 29 կողմ, դեմ՝ 4 ձայներով Ազգային ժողովի նախագահ ընտրեցին «Ազատ Հայրենիք-ՔՄԴ» խմբակցության պատգամավոր Արթուր Թովմասյանին:

# ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Դեռեւս նախորդ տարի, շրջակա միջավայրի նախարարության եւԳլոբալ էկոլոգիական հիմնադրամի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում, 2020 թվականի մայիսի 20-ին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը հաստատեց շուրջ 1.000.000 ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով Հայաստանին հատկացվող դրամաշնորհը:*




Փարիզյան համաձայնագրի ներքո անդամ պետությունները «Ազգային մակարդակով սահմանված գործողությունների» միջոցով ներկայացնում են ազգային կլիմայական օրակարգն ու պարտավորությունները, որոնք իրականացնելու են հանուն համընդհանուր նպատակի՝ պահպանել գլոբալ ջերմաստիճանի բարձրացումը մինչեւ 2 աստիճան մինչարդյունաբերական ժամանակաշրջանի մակարդակից (միեւնույն ժամանակ՝ նպատակ ունենալով զսպել մինչեւ1,5$^{0}$) եւ արդյունքում խուսափել կլիմայի փոփոխության անդառնալի բացասական հետեւանքներից:

Փարիզի համաձայնագրի շուրջ բանակցությունների կարեւոր արդյունքներից էր թափանցիկության ուժեղացված շրջանակի ստեղծումը՝ երկրների կողմից առկա եւ ապագա պարտավորությունների կատարման ընթացքին հետամուտ լինելու համար: Այդ իսկ նպատակով, «Փարիզի համաձայնագրի ներքո թափանցիկության ազգային շրջանակի կառուցում» ծրագիրը ստեղծվել է Համաձայնագրի անդամ պետությունների խնդրանքով՝ աջակցելու ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի/ ԿՓՇԿ-ի/ Հավելված I-ում չընդգրկված երկրներին (այդ թվում՝ Հայաստանին)՝ ամրապնդելով ինստիտուցիոնալ եւ տեխնիկական կարողությունները ու ազգային առաջնահերթություններին համապատասխան՝ բարձրացնելով հաշվետվողականության թափանցիկությունը:

# ԳՈՂԱՑԵԼ ԵՆ «ԱՐԱՐԱՏ - 73»-ԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՁԱՆՆԵՐԸ



Գողացել են «Հրազդան» մարզադաշտի հարեւանությամբ տեղադրված՝ «Արարատ 73»-ին նվիրված արձանախմբի մի քանի արձան: Հանցագործները պոկել եւ տարել են երրորդ շարքում տեղադրված Նիկիտա Սիմոնյանի, Ռոբերտ Ծաղիկյանի, Օնիկ Աբրահամյանի, Հարություն Քեհեյանի արձանները:

«Արարատ 73»-ի հաղթանակներին նվիրված արձանախմբի մի քանի արձանների գողության փաստով ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Արձանախումբը տեղադրվել է 2016 թվականին: «Արարատ 73»-ի հաղթանակներին նվիրված արձանախմբի ճարտարապետը Տիգրան Բարսեղյանն է, իսկ քանդակագործների խումբը ղեկավարել է Արմեն Սամվելյանը: Այն ստեղծվել է ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի անձնական միջոցներով:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 5928 ՎԱՐԱԿՎԱԾ, 2874 ԱՊԱՔԻՆՎԱԾ

***Հայաստանում, մայիսի 22-ի դրությամբ, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության ընդհանուր 5928 դեպք, որոնցից 2874-ն՝ առողջացած:***

***Հայաստանի առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի տվյալներով, կորոնավիրուսային հիվանդությամբ այս պահին փաստացի բուժում է ստանում 2952 բուժառու: Ընդհանուր առմամբ, կատարվել է 47 654 թեստավորում: Այսպիսով, կա կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված 322 նոր դեպք եւ՝ 293 առողջացած:***

***Ընդհանուր առմամբ, կորոնավիրուսային հիվանդությունից արձանագրվել է մահվան 70 դեպք: Արձանագրվել է նաեւ մահվան 28 դեպք, երբ բուժառուների մոտ հաստատվել է կորոնավիրուսային վարակ, սակայն մահը վրա է հասել այլ հիվանդության պատճառով:***

## «ՎԱՐԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

***Հայաստանի ֆինանսների նախարարությունը տեղեկացնում է, որ մարտի 17-ին գանձապետարանում բացված «Ֆիզիկական անձանց - կազմակերպությունների նվիրաբերությունից պետությանը, կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման - հաղթահարման ապահովման համար ֆինանսական աջակցություն» 900005001947 հաշվի մուտքերը, մայիսի 22-ի դրությամբ, կազմել են 1 մլրդ 093 մլն 409 հազ. 645.2 դրամ, իսկ մուտքերի ընդհանուր քանակը՝ 4295***

## ՄԵԿ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***Հայաստանում բուհերում ընդունելությունը կիրականացվի մեկ քննության արդյունքների հիման վրա:***

***Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի հայտարարությամբ՝ դիմորդներն ընդունելության քննության եւ մասնագիտությունների նշումով դիմում-հայտը կարող են Գնահատման եւ թեստավորման կենտրոն ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ մայիսի 25-ից մինչեւ հունիսի 15-ը:***

***- Մեկ քննությունը կլինի երկու կամ երեք պարտադիր առարկաներից մեկից: Իսկ այն քննությունները, որոնք եղել են կամ ընտրական, թույլ ենք տվել, որ դիմորդն ինքն ընտրի,- ասաց նախարարը՝ ավելացնելով, որ քննությունները տեղի կունենան հուլիսի 1-8-ը:***

***Ժամկետն ընտրվել է այնպես, որպեսզի քննական գործընթացը զորակոչին չխանգարի, եւ զորակոչիկները կարողանան մասնակցել քննություններին:***

***Հարությունյանի խոսքով՝ բանակից վերադարձողները կարող են հայտը ներկայացնել էլեկտրոնային եղանակներով:***

## ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ ԱՃԵԼ Է 3,8 ՏՈԿՈՍՈՎ

***Հայաստանում, այս տարվա առաջին եռամսյակում, համախառն ներքին արդյունքի աճը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, կազմել է 3.8 տոկոս:***

***Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ համախառն ներքին արդյունքը ընթացիկ գներով կազմել է 1 տրլն 267 մլրդ 150.8 մլն դրամ: Գյուղատնտեսությանը, անտառային տնտեսությանը եւ ձկնորսությանը ՀՆԱ կառուցվածքում բաժին է ընկել 4.7 տոկոսը, շինարարությունը կազմել է 3.1 տոկոսը: Կացության եւ հանրային սննդի կազմակերպումը կազմել է ՀՆԱ-ի 1.5 տոկոսը: Կրթությունը զբաղեցրել է 2.6 տոկոսը, Առողջապահություն եւ բնակչության սոցիալական սպասարկումը՝ 5.9 տոկոսը:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՅԻՍ

*24.05.2020 Երկրորդ Ծաղկազարդ*



Քրիստոսի Համբարձման տոնին հաջորդող կիրակի օրը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկազարդը: Տոնի անվանումն առաջացել է Զատիկի՝ Սբ. Հարության նախորդող Ծաղկազարդի տոնի անվանումից: Վերջինս խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, երբ մարդիկ Տիրոջը դիմավորում էին փառաբանությամբ ու ցնծությամբ եւ ծառերի ճյուղեր սփռում Նրա առաջ:

Երկրորդ Ծաղկազարդն արդեն համբարձյալ Քրիստոսի Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները: Երկրորդ Ծաղկազարդը քրիստոնյաներին վերստին հիշեցնում է Քրիստոսի Համբարձումը եւ՝ մահվանից հետո երկնքում, Աստծո ներկայությամբ երանություն վայելելու հույս պարգեւում:

ԵՂԱՆԱԿ

## ՄԱՅԻՍԻ 22-ից՝ ԿՎԱՎԵՐԱՑՎԻ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՒԿ ԱՆԿՈՒՄ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի շրջակա միջավայրի ազգային գործակալությունը՝ մայիսի 22-ից Վրաստանում եղանակը կվատթարանա:***

Հաղորդագրության մեջ նշված է, որ մայիսի 21-22-ին Վրաստանում օդի առավելագույն ջերմաստիճանը կկազմի 31-360: Սակայն մայիսի 22-ին օրվա երկրորդ կեսից սպասվում է օդերեւութաբանական պայմանների կտրուկ վատթարացում՝ անձրեւ, որոշ տեղերում՝ կարկուտ, արեւմտյան ուժեղ քամի, մայիսի 23-ին ծովում սպասվում է 4-5 բալ ուժգնությամբ փոթորիկ:

«Մայիսի 23-24-ին օդի ջերմաստիճանը զգալիորեն կնվազի՝ մինչեւ 15-170: Հորդառատ անձրեւները կարող են գետերում ջրի մակարդակի բարձրացման պատճառ դառնալ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆ

## «ԵՎՐԱՏԵՍԻԼ-2020»-Ի ՓՈԽԱՐԵՆ՝ ՇՈՈՒ ԾՐԱԳԻՐ



Ինչպես արդեն հաղորդել ենք, «Եվրատեսիլ-2020» երգի միջազգային մրցույթը պետք է տեղի ունենար Նիդերլանդների Ռոտերդամ քաղաքում: Մրցույթի կիսաեզրափակիչ փուլերը պետք է անցկացվեին մայիսի 12-14-ին, իսկ եզրափակիչը՝ մայիսի 16-ին: Երգի փառատոնին Վրաստանը պետք է ներկայացներ Թոռնիկե Ղիփիանին, իսկ Հայաստանը՝ Աթենա Մանուկյանը:



Նոր կորոնավիրուսի համավարակի արդյունքում՝ «Եվրատեսիլ-2020»-ը, միջազգային մյուս միջոցառումների օրինակով, անորոշ ժամանակով հետաձգվեց:

«Եվրատեսիլ-2020» երգի միջազգային մրցույթի մասնակիցների եւ երկրպագուների սպասելիքներն ինչ-որ չափով արդարացնելով՝ Եվրոպական հեռարձակողների միությունը մայիսի 16-ին մրցույթին փոխարինող շոու ծրագիր ներկայացրեց:

«Լուսարձակիր, Եվրոպա» շոու ծրագրի շրջանակում ներկայացվեցին մրցույթի տարբեր տարիների լավագույն մասնակիցների ելույթները, իսկ այն երգիչները, որոնք պետք է մասնակցեին «Եվրատեսիլ-2020»-ին, տեսակապով միացան ծրագրին՝ խոսելով այն մասին, որ երաժշտությունը միավորում է բոլորին:

ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐ

## ՆՈՐ ԵԹԵՐԱՇՐՋԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ




***Վրաստանի առաջին ալիքը պատրաստվում է նոր եթերաշրջանի համար: Մայիսի 24-ին կմեկնարկեն լայնածավալ նախագծերը, որոնք գրեթե երեք ամսով հետաձգվել էին կորոնավիրուսի պատճառով:***

Բոլորի սիրված «Մաստերշեֆ» մեգաշոուն վերադառնում է: Վրաստանում միակ միջազգային խոհարարական նախագծի երրորդ եթերաշրջանի մասնակիցների ընտրությունն արդեն ավարտվել է: Սկսվում է «Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ» ծրագրի ամառային շարքը: «Իդեալական մայր» հեռուստասերիալը կվերահայտնվի առաջին ալիքի էկրանին, որը առաջին իսկ սերիայից արժանացել է հեռուստադիտողների առանձնահատուկ սիրուն: Նախապատրաստություններ են ընթանում նաեւ «The Voice» հեղինակավոր միջազգային երաժշտական մրցույթի լիցենզավորված վրացական անալոգի համար:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ Է ԳՈՐԾՈՒՄ

## ՏՈԿԻՈՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ

Միջազգային օլիմպիական կոմիտեն (ՄՕԿ) կիրաժարվի Տոկիոյի Օլիմպիական խաղերը անցկացնելու գաղափարից, եթե դրանք չկայանան 2021 թվականի ամռանը:

Նշենք, որ մարտի 24-ին հայտնի դարձավ, որ Տոկիոյի 32-րդ ամառային օլիմպիական խաղերը հետաձգվել են: ՄՕԿ-ի նախագահ Թոմաս Բախը եւ Ճապոնիայի վարչապետ Սինձո Աբեն հեռախոսազրույց են ունեցել եւ վարչապետի առաջարկից հետո՝ Բախն իր համաձայնությունն էր տվել խաղերը մեկ տարով հետաձգելու:

Այս պահի դրությամբ հայտնի է, որ Օլիմպիական խաղերը կպահպանեն իրենց անվանումը՝ «Տոկիո-2020»: Դրանք կմեկնարկեն 2021 թվականի հուլիսի 23-ին եւ կեզրափակվեն օգոստոսի 8-ին:

## ՖԻՖԱ. «THE BEST» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԱՆՑԿԱՑՎԻ

ՖԻՖԱ-ն, 2019/20 մրցաշրջանի համար, չի ընտրի տարվա լավագույն ֆուտբոլիստին եւ չի անցկացնի «The Best» մրցանակաբաշխությունը:

Մրցանակաբաշխությունը նախատեսված էր անցկացնել սեպտեմբերին, սակայն այն չի կայանա կորոնավիրուսի պանդեմիայի պատճառով: «The Best» մրցանակաբաշխության ընթացքում պարգեւատրվում էին ՖԻՖԱ-ի կողմից ընտրված լավագույն ֆուտբոլիստը, լավագույն կին ֆուտբոլիստը, լավագույն կին եւ տղամարդ մարզիչները, լավագույն դարպասապահները եւ այլն:

Հիշեցնենք, որ նախորդ տարի լավագույնի տիտղոսին արժանացել էր Լիոնել Մեսին:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը խորապես վշտակցում է Գայանե Բոստանջյանին եւ Մարինե Թորոսյանին, սիրելի տատիկի, մեր անմոռանալի գործընկեր, լրագրող, բանաստեղծուհի, երջանկահիշատակ Անահիտ Բոստանջյանի մոր՝

*Մարիամ Եղիշեի ԴԱՆԵԼՅԱՆԻ*

մահվան կապակցությամբ եւ իր ցավակցությունն է բերում հանգուցյալի հարազատներին, բարեկամներին ու մերձավորներին:





## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հայ առաջին դիվանագետ կինը, Ճապոնիայի դեսպան ... Աբգար: 4.Գրիմ Եղբայրների հեքիաթի հերոս: 10.Պայծառ աստղ Քնար համաստեղությունում: 11.Սպորտային հագուստի ֆիրմա: 12.Արեւմտահայ գրող, ում անվանել են «Նորավեպի իշխան»: 13.Կոմպոզիտոր ... Մուրզա: 14.Հեքիաթ «... Հասանի մաշիկները»: 15.Հերոսուհի «Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմում: 16.Գրական ստեղծագործություն: 17.Երեւանում լույս տեսնող շաբաթաթերթ: 19.Ցուցական դերանուն: 20.Վարպետ (բրբ.): 23.Դեմքի մաս: 25.Լվացքի հին փոշի: 26.Հրահեղուկ զանգված: 29.Բայի վերջավորություն: 30.Զաքարեի եղբայրը: 32.Տիկինը ֆրանսերենով: 34.Ամերիկյան ոստիկան: 35.Ժխտական նախածանց: 36.Ատամի պարսկական մածուկ: 38.Հոգնակիակերտ մասնիկ: 39.Շան ուտելիք: 42.Կոմիտասի երգերից «..., ...»: 43.Անշունչ առարկա: 44.Ե.Չարենցի պոեմներից: 45.«... ծովենեն դուրս եկած ռաշ ու ջեյրան իս ինձ ամա» (Սայաթ-Նովա): 48.ԱՄՆ-ի նախագահներից: 49.Եփ..., Ֆահ...: 50.Քաղաք Հայաստանում: 52....ֆֆի, ...բունի: 53.Համադասական շաղկապ: 54.Ստորադասական շաղկապ: 55.Աղմուկ-աղաղակ: 56.Շիրվանզադեի երկերից: 58.Ջրերի աստվածուհին Հայոց դիցաբանության մեջ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.«Սա ...ն ըլլայի ես» (Միսաք Մեծարենց): 3.Հովհ.Թումանյանի դուստրերից: 4.«Ունաիրյան աղջիկների ... պարն եմ սիրում» (Ե.Չարենց): 5.Երեւանի ռադիո «Վան»-ի հաղորդավար ... Գլումով: 6.Հայֆիլմ՝ նվիրված հայոց Մեծ Եղեռնին: 7.Լուսատու: 8.«Ազդարար» առաջին հայ պարբերականը լույս է տեսել այս քաղաքում: 9.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 15.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 16.Գալուստ Գյուլբենկյանի կնոջ ազգանունը: 18.Կովկասյան ազգություն: 19.Ատաղձագործի գործիք: 21.Պատմավիպասան Րաֆֆու վեպերից: 22.Արձակագիր Մարկ Արենի հերոսներից: 23.Վրաց մեծ երաժշտագետ: 24.Կապի միջոց: 27.Հայոց ճաշատեսակի բաղադրիչ բույս: 28.... ու ցանք: 31.Զինվորականի աստիճան: 33.Սար Արեւմտյան Հայաստանում: 37.Սայաթ-Նովայի կինը: 40.Դերերգ օպերայում: 41.Ղ.Աղայանի ծննդավայր գյուղը՝ ...-Խաչեն: 45.Արցախի ազատամարտի ամերիկահայ հերոս, ում անվանել են «Սպիտակ արջ» ... Քաղկեջյան: 46.Գետի, լճի ...: 47.Արեւմտահայ գրող, Հայոց ցեղասպանության զոհ: 50.Շոթա Ռուսթավելու հերոսուհի ...թին: 51.Պերուի մայրաքաղաքը: 57.Հարցական դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Պռոշյան: 9.Իպրիտ: 10.Շեյկ: 11.Համամիտ: 13.Իսլամ: 16.Լառ: 17.Կում: 19.Կրպակ: 22.Հունար: 24.Ռատուշա: 25.Դեպք: 27.Բիլինա: 29.Նեստլե: 32.Պյոտր: 33.Սոմալի: 35.Տեղը: 38.Քոս: 40.Մինին: 41.Շիրա: 44.Էդիտ: 47.Դուռ: 48.Կտոր: 50.Ակոռի: 51.Էդի: 52.Ռե: 53.Փալ: 54.Շեջ: 55.Ոջիլ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ռռնալ: 2.Թշվառ: 3.Մաշիկ: 4.Ռիկի: 5.Գրել: 6.Ատոմ: 8.Նետում: 12.Մայն: 14.Սիրտ: 15.Ադաշ: 18.Արեն: 19.Կաղետ: 20.Պուլտ: 21.Կառե: 23.Ադիդաս: 26.Պապի: 28.Իրոք: 29.Նոթ: 30.Սրտի: 31.Լեղի: 34.Մոնիկա: 36.Ենոտ: 37.Ընտրել: 39.Արու: 42.Իդիշ: 43.Առէջ: 45.Դափ: 46.Տոլ: 48.Կիտ: 49.Որի:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445